**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ**
**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**
**20 մայիսի 2025 թվական**

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
# ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 4-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 4-ՐԴ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 54 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին Երևանի քաղաքապետի տեղակալներ՝ Սուրեն Գրիգորյանը, Լևոն Հովհաննիսյանը և Սարգիս Մադաթյանը, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակվոր պաշտոնակատար Շավարշ Գրիգորյանը, աշխատակազմի քարտուղարի տեղակալ Վիլեն Արևշատյանը, քաղաքապետի խորհրդականներ՝ Կամո Արեյանը, Արփենիկ Մուրադյանը, Սոնա Թևանյանը, Աշոտ Շահբազյանը, քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Քրիստինե Ավետիսյանը, իրավաբանական վարչության պետ Տարոն Մարգարյանը, կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը, անշարժ գույքի կառավարման վարչության պետ Վահան Խաչատրյանը, քաղաքաշինական հատուկ ծրագրերի վարչության պետի տեղակալ Շանթ Մալխասյանը, բնապահպանության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Սիրարփի Հայկազյանը, տրանսպորտի վարչության պետ Վազգեն Հարությունյանը, եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Դավիթ Հակոբյանը, լրատվության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Օֆելյա Սիմոնյանը, «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի տնօրեն Սաշա Կատվալյանը:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի ավագանու 4-րդ նստաշրջանի հաջորդ հերթական նիստը կգումարվի 2025 թվականի հունիսի 24-ին, ժամը 10.00-ին:

Երևանի քաղաքապետը տեղեկացրեց, որ օրակարգի չզեկուցվող 10-րդ՝ «Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Այասի փողոց հ.78/6 հասցեում թվով 2 բազմաբնակարան բնակելի շենքերի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանն անհամաձայնություն տրամադրելու մասին» հարցը հանվում է քննարկումից:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի ավագանու 2025 թվականի մայիսի 20-ի հերթական նիստի օրակարգի նախագծում ընդգրկված է 22 հարց, որից՝ 2-20-րդ հարցերը չզեկուցվող են.

1. Երևանի ավագանու 4-րդ նստաշրջանի 4-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N268-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Չզեկուցվող)
3. Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2024 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևան քաղաքի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը հաստատելու մասին: (Չզեկուցվող)
4. «Երևանի քաղաքային նոր աղբավայր» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին: (Չզեկուցվող)
5. «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին: (Չզեկուցվող)
6. «Փարքինգ սիթի սերվիս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին: (Չզեկուցվող)
7. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N259-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին: (Չզեկուցվող)
8. Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին: (Չզեկուցվող)
9. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N41-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Չզեկուցվող)
10. Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Ներքին Չարբախ 9-րդ փողոց հ. 19/3 հասցեում արտադրամասի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
11. Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Թբիլիսյան խճուղի հ.27/3 հասցեում արտադրական նշանակության շինության և արհեստանոցի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
12. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Սարյան փողոց հ. 22 շենք, 2 շինություն և Սարյան փողոց հ. 22 հասցեներում գոյություն ունեցող շինությունների քանդման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
13. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Թումանյան փողոց հ.8, Հանրապետության փողոց հ.83 տուն 1 ավտոտնակ, 83/2 բնակելի տուն, 85 շենք 9

ավտոտնակ, Սայաթ Նովա պողոտա հ.20/5 հասցեներում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)

14. Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Գայի պողոտա հ. 45/6 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանն անհամաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
15. Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին: (Չզեկուցվող)
16. Ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին: (Չզեկուցվող)
17. Երևան քաղաքում փողոց անվանակոչելու մասին: (Չզեկուցվող)
18. Երևան քաղաքում Աշոտ Մանուկյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին: (Չզեկուցվող)
19. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 266-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին: (Չզեկուցվող)
20. Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի հունիսի 17-ի N106-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին: (Չզեկուցվող)
21. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի մարտի 18-ի N313-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին: (Զեկուցվող)
22. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N267-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին: (Զեկուցվող)

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ օրակարգի չզեկուցվող 12-րդ՝ «Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Սարյան փողոց հ.22 շենք, 2 շինություն և Սարյան փողոց հ.22 հասցեներում գոյություն ունեցող շինությունների քանդման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին», 13-րդ՝ «Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Թումանյան փողոց հ.8, Հանրապետության փողոց հ.83 տուն 1 ավտոտնակ, 83/2 բնակելի տուն, 85 շենք 9 ավտոտնակ, Սայաթ Նովա պողոտա հ.20/5 հասցեներում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին» հարցերի վերաբերյալ գլխադասային՝ քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի կողմից տրվել է բացասական եզրակացություն, 20-րդ՝ «Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի հունիսի 17-ի N106-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» հարցի վերաբերյալ գլխադասային՝ ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից տրվել է բացասական եզրակացություն:

Ելույթով հանդես եկավ ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանը և առաջարկեց օրակարգի չզեկուցվող 5-րդ՝ ««Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին», 6-րդ՝ ««Փարքինգ սիթի սերվիս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին» և 20-րդ՝ «Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 266-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» հարցերը քննարկել զեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան:

Առաջարկը դրվեց քվեարկության.

Կողմ՝ 27, դեմ՝ 30, ձեռնպահ՝ 3

Առաջարկը չընդունվեց:

«Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանն առաջարկեց, հաշվի առնելով, որ գլխադասային՝ քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի կողմից տրվել է բացասական եզրակացություն, օրակարգի 12-րդ՝ «Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Սարյան փողոց հ.22 շենք, 2 շինություն և Սարյան փողոց հ.22 հասցեներում գոյություն ունեցող շինությունների քանդման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին» և 13-րդ՝ «Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Թումանյան փողոց հ.8, Հանրապետության փողոց հ.83 տուն 1 ավտոտնակ, 83/2 բնակելի տուն, 85 շենք 9 ավտոտնակ, Սայաթ Նովա պողոտա հ.20/5 հասցեներում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին» հարցերը հանել օրակարգից:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը ներկայացրեց պարզաբանումներ առաջարկի վերաբերյալ:

Ելույթով հանդես եկավ ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Արմեն Գալջյանը և առաջարկեց օրակարգի զեկուցվող 22-րդ՝ «Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N267-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» հարցը քննարկել չզեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան:

Առաջարկը դրվեց քվեարկության.

Կողմ՝ 30, դեմ՝ 25, ձեռնպահ՝ 5

Առաջարկը չընդունվեց:

Ելույթով հանդես եկավ ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանը և առաջարկեց օրակարգի բոլոր հարցերը քննարկել չզեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան:

Առաջարկը դրվեց քվեարկության.
Կողմ՝ 11, դեմ՝ 44, ձեռնպահ՝ 3

Առաջարկը չընդունվեց:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտարարեց, որ քվեարկության է դրվում Երևանի ավագանու 2025 թվականի մայիսի 20-ի նիստի օրակարգի նախագիծը.

1. Երևանի ավագանու 4-րդ նստաշրջանի 4-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N268-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Չզեկուցվող)
3. Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2024 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևան քաղաքի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը հաստատելու մասին: (Չզեկուցվող)
4. «Երևանի քաղաքային նոր աղբավայր» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին: (Չզեկուցվող)
5. «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին: (Չզեկուցվող)
6. «Փարքինգ սիթի սերվիս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին: (Չզեկուցվող)
7. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N259-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին: (Չզեկուցվող)
8. Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին: (Չզեկուցվող)
9. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N41-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Չզեկուցվող)
10. Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Ներքին Չարբախ 9-րդ փողոց հ. 19/3 հասցեում արտադրամասի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
11. Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Թբիլիսյան խճուղի հ.27/3 հասցեում արտադրական նշանակության շինության և արհեստանոցի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
12. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Սարյան փողոց հ. 22 շենք, 2 շինություն և Սարյան փողոց հ. 22 հասցեներում գոյություն ունեցող շինությունների քանդման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
13. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Թումանյան փողոց հ.8, Հանրապետության փողոց հ.83 տուն 1 ավտոտնակ, 83/2 բնակելի տուն, 85 շենք 9

ավտոտնակ, Սայաթ Նովա պողոտա հ.20/5 հասցեներում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)

14. Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Գայի պողոտա հ. 45/6 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանն անհամաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
15. Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին: (Չզեկուցվող)
16. Ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին: (Չզեկուցվող)
17. Երևան քաղաքում փողոց անվանակոչելու մասին: (Չզեկուցվող)
18. Երևան քաղաքում Աշոտ Մանուկյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին: (Չզեկուցվող)
19. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 266-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին: (Չզեկուցվող)
20. Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի հունիսի 17-ի N106-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին: (Չզեկուցվող)
21. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի մարտի 18-ի N313-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին: (Զեկուցվող)
22. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N267-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին: (Զեկուցվող)

**1. ԼՍԵՑԻՆ – Երևանի ավագանու 4-րդ նստաշրջանի 4-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ –** կողմ՝ 34, դեմ՝ 25, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտնեց, որ հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 18.06.2009թ. N1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետի 5-րդ ենթակետը՝ առաջնահերթ քվեարկության են դրվում օրակարգում ընդգրկված չզեկուցվող՝ 2-ից 20-րդ հարցերը:

Տ.Ավինյանը ներկայացրեց չզեկուցվող հարցերի վերաբերյալ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովների կողմից տրված եզրակացությունները:

**2. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N268-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 268-Ն որոշման NN 1, 2, 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN1-5 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**3. Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2024 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևան քաղաքի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը հաստատելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ - 1. Հաստատել Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների 2024 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևան քաղաքի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ սույն որոշման հավելվածում նշված կազմակերպությունների կողմից շահութաբաժինների վճարումները Երևան քաղաքի բյուջե կատարվում են եռամսյա ժամկետում (ամսական հավասար չափերով), բայց ոչ ուշ, քան մինչև 2025 թվականի հոկտեմբերի 1-ը:

**4. «Երևանի քաղաքային նոր աղբավայր» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ - 1. Հաստատել «Երևանի քաղաքային նոր աղբավայր» փակ բաժնետիրական ընկերության՝ Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեից բաժնետոմսերի և կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերման նպատակով հատկացված 10,565,000 (տասը միլիոն հինգ հարյուր վաթսունհինգ հազար) ՀՀ դրամի սահմաններում՝ կանոնադրական կապիտալի՝ 10,560,000 (տասը միլիոն հինգ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամի չափով ավելացմամբ պայմանավորված՝ Երևան համայնքի կողմից լրացուցիչ ձեռք բերված 1056 (մեկ հազար հիսունվեց) հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը՝ 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով տեղաբաշխման արդյունքները:

2. «Երևանի քաղաքային նոր աղբավայր» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը սահմանել 88.610.000 (ութսունութ միլիոն վեց հարյուր տասը հազար) ՀՀ դրամ, որը կազմում է 8861 (ութ հազար ութ հարյուր վաթսունմեկ) հատ 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսեր:

3. Հաստատել «Երևանի քաղաքային նոր աղբավայր» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

**5. «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ - 1. Հաստատել «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության՝ Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեից բաժնետոմսերի և կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերման նպատակով հատկացված 7,000,000,000 (յոթ միլիարդ) ՀՀ դրամի սահմաններում՝ կանոնադրական կապիտալի՝ 7,000,000,000 (յոթ միլիարդ) դրամի չափով ավելացմամբ պայմանավորված՝ Երևան համայնքի կողմից լրացուցիչ ձեռք բերված 700,000 (յոթ հարյուր հազար) հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը՝ 10,000 (տասը հազար) դրամ անվանական արժեքով տեղաբաշխման արդյունքները:

2. «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը սահմանել 16,188,380,000 (տասնվեց միլիարդ հարյուր ութսունութ միլիոն երեք հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, որը կազմում է 1,618,838 (մեկ միլիոն վեց հարյուր տասնութ հազար ութ հարյուր երեսունութ) հատ 10.000 (տասը հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսեր:

3. Հաստատել «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

**6.«Փարքինգ սիթի սերվիս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ - 1. Հաստատել «Փարքինգ սիթի սերվիս» փակ բաժնետիրական ընկերության՝ Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեից բաժնետոմսերի և կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերման նպատակով հատկացված 198,000,000 (հարյուր իննսունութ միլիոն) ՀՀ դրամի սահմաններում՝ կանոնադրական կապիտալի՝ 198,000,000 (հարյուր իննսունութ միլիոն) ՀՀ դրամի չափով ավելացմամբ պայմանավորված՝ Երևան համայնքի կողմից լրացուցիչ ձեռք բերված 198,000 (հարյուր իննսունութ հազար) հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը՝ 1000 (մեկ հազար) դրամ անվանական արժեքով տեղաբաշխման արդյունքները:

2. «Փարքինգ սիթի սերվիս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը սահմանել 2,309,163,000 (երկու միլիարդ երեք հարյուր ինը միլիոն հարյուր վաթսուներեք հազար) ՀՀ դրամ, որը կազմում է 2,309,163 (երկու միլիոն երեք հարյուր ինը հազար հարյուր վաթսուներեք) հատ 1000 ՀՀ դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսեր:

3. Հաստատել «Փարքինգ սիթի սերվիս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

**7. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N259-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2025 թվականի ծրագրի (ներառյալ՝ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում համայնքի մասնակցության) վերաբերյալ» N 259-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 6-րդ գլխի աղյուսակը լրացնել նոր՝ 16-42-րդ կետերով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**8. Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ – 1. Համաձայնություն տալ՝ «ՄԵԾ ՄԱՅՐԻԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Արին Բերդի փողոցի հ.29 հասցեում գտնվող 15.891459հա հողամասը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.18042025-01-0359 վկայական/ Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Շիրակի փողոցի հ.2/44 հասցեում գտնվող 12.085535հա մակերեսով հողամասի /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.23122021-01-0193 վկայական/ հետ փոխանակելուն: 2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

**9. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N41-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N 10-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 41-Ա որոշման N 2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Քաղաքաշինական հատուկ ծրագրերի վարչություն» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.»

| Հ/Հ | **Քաղաքաշինական հատուկ ծրագրերի վարչություն** | Հաստիքների քանակը | Հաստիքի ամսական պաշտոնային դրույքաչափը | Հավելում | Ընդամենը ամսական աշխատավարձը |
|---|---|---|---|---|---|

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1 | վարչության պետ | 1 | 697,000 | | 697,000 |
| 2 | վարչության պետի տեղակալ | 1 | 561,000 | | 561,000 |
| 3 | գործավար | 1 | 248,200 | | 248,200 |
| - | **Քաղաքաշինական փաստաթղթերի կազմման բաժին** | | | | |
| 3 | Բաժնի պետ | 1 | 408,000 | | 408,000 |
| 4 | գլխավոր մասնագետ | 4 | 289,000 | | 1,156,000 |
| 5 | առաջատար մասնագետ | 4 | 282,200 | | 1,128,800 |
| - | **Քաղաքաշինության վերլուծության բաժին** | | | | |
| 6 | Բաժնի պետ | 1 | 408,000 | | 408,000 |
| 7 | գլխավոր մասնագետ | 2 | 289,000 | | 578,000 |
| 8 | առաջատար մասնագետ | 6 | 282,200 | | 1,693,200 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **21** | | | **6,878,200** |

2) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «ԱՄԲՈՂՋԸ՝ Երևանի քաղաքապետարան»» տողում «263,489,445» փոխարինել «263,475,845» թվերով:

3) «ԱՄԲՈՂՋԸ» տողում «693,408,845» փեխարինել «693,395,245» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտը ուժի մեջ մտնելու պահից:

**10. Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Ներքին Չարբախ 9-րդ փողոց հ. 19/3 հասցեում արտադրամասի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ – 1. «ԱՐ ԸՆԴ ԷՎ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված՝ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Ներքին Չարբախ 9-րդ փողոց հ. 19/3 հասցեում արտադրամասի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

**11. Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Թբիլիսյան խճուղի հ.27/3 հասցեում արտադրական նշանակության շինության և արհեստանոցի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ – 1. Նարեկ Մարգարյանի կողմից ներկայացված՝ Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Թբիլիսյան խճուղի հ. 27/3 հասցեում արտադրական նշանակության շինության և արհեստանոցի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

**12.Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Սարյան փողոց հ. 22 շենք, 2 շինություն և Սարյան փողոց հ. 22 հասցեներում գոյություն ունեցող շինությունների քանդման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ – 1. «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՆՏՐՈՆ ԵՐԵՎԱՆ» ՓԲ ընկերության կողմից ներկայացված՝ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Սարյան փողոց հ. 22 շենք, 2 շինություն և Սարյան փողոց հ. 22 հասցեներում գոյություն ունեցող շինությունների քանդման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

**13. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Թումանյան փողոց հ.8, Հանրապետության փողոց հ.83 տուն 1 ավտոտնակ, 83/2 բնակելի տուն, 85 շենք 9 ավտոտնակ, Սայաթ Նովա պողոտա հ.20/5 հասցեներում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ – 1. «ՊՐԵՄԻՈՒՄ ՊԼԱԶԱ» ՓԲ ընկերության կողմից ներկայացված՝ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Թումանյան փողոց հ. 8, Հանրապետության փողոց հ. 83 տուն 1 ավտոտնակ, 83/2 բնակելի տուն, 85 շենք 9 ավտոտնակ, Սայաթ Նովա պողոտա հ. 20/5 հասցեներում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ

սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

**14. Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Գայի պողոտա հ. 45/6 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանն անհամաձայնություն տրամադրելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ – 1. Սամվել Սահակյանի կողմից ներկայացված Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Գայի պողոտա հ. 45/6 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել անհամաձայնություն՝ հետևյալ պատճառաբանությամբ.

1) Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 22-ի N 04-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերի» (այսուհետ՝ Նորմեր) 241-րդ կետի համաձայն՝ տարբեր նշանակության կանաչապատ տարածքների տեսակարար կշիռը բնակավայրի ընդհանուր տարածքի նկատմամբ պետք է լինի 40%-ից ոչ պակաս, իսկ բնակելի (բնակեցման) տարածքի սահմաններում՝ 25%-ից ոչ պակաս: Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Գայի պողոտա հ. 45/6 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նախագծման աշխատանքների համար հիմք է հանդիսացել 07.10.2022թ. տրամադրված հ. 01118-07/1-Դ-82263-874 նախագծման թույլտվությունը, որի համաձայն կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին (հողամասի մակերես՝ 2299,89 մ2) պետք է կազմի 40 տոկոս և ավելի, այսինքն՝ 919,956 մ2: Նախաձեռնողի կողմից ներկայացված էսքիզային նախագծի համաձայն հողամասի մակերեսը կազմում է 2293,8 մ2, կանաչապատման մակերեսը՝ 970 մ2, սակայն էսքիզային նախագծի ուսումնասիրությունից պարզվել է, որ կանաչապատ տարածքի մակերեսի մեջ ընդգրկվել է նաև բնակելի շենքի պարագծով սալվածքը: Նորմերի 6-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ սալվածքը (отмостка)՝ շենքի պարագծով տեղակայված, սալապատմամբ կամ ասֆալտբետոնե ծածկով կառուցված հարթակ, շենքի գետնախարսխին հարող կոնստրուկտիվ տարր, որը պաշտպանում է շենքի հիմքը մթնոլորտային ջրերի ներթափանցումից (ազդեցությունից): Տվյալ նախատեսվող գործունեության դեպքում կանաչապատման մակերեսը կազմում է 919,956 մ2-ից պակաս, այսինքն չի պահպանվում նախագծման թույլտվությամբ սահմանված 40% և ավելի պահանջը:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

**15. Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ – 1.Թույլատրել սույն որոշման հավելվածում նշված անձանց՝ 2025 թվականի ընթացքում շարունակելու հավելվածում նշված տարածքներում և սահմանված

պայմաններով նախորդ տարիներին կազմակերպված ծառայողական ավտոկայա-նատեղերի շահագործումը:

**16. Ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ – 1. Թույլատրել սույն որոշման հավելվածում նշված կազմակերպություններին՝ սույն որոշման հավելվածում նշված տարածքներում և սահմանված պայմաններով կազմակերպել ծառայողական ավտոկայանատեղ:

**17. Երևան քաղաքում փողոց անվանակոչելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ – 1 Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Սիլիկյան 4-րդ փողոցը՝ նրբանցքով (սկսվում է Սիլիկյան 5-րդ փողոցից, հասնում՝ Սիլիկյան հին խճուղի), անվանակոչել հայ հոգևոր երգիչ, մանկավարժ Խորեն Պալյանի անվամբ՝ «Խորեն Պալյան փողոց», «Խորեն Պալյան փողոց, 1-ին նրբանցք»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**18. Երևան քաղաքում Աշոտ Մանուկյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի 5-րդ փողոցը (սկսվում է Երևանի Ա.Մանուկյանի անվան հ.93 միջնակարգ դպրոցից հասնում հ.46 հասցեի հարակից տարածք), անվանակոչել ազատամարտիկ, ռազմական գործիչ Աշոտ Մանուկյանի անվամբ՝ «Աշոտ Մանուկյան» փողոց:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**19. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 266-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Երևան համայնքում 2025 թվականի տեղական տուրքերի գծով արտոնություններ սահմանելու մասին» N 266-Ն որոշման 7-րդ կետում լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ընդ որում, սույն կետում նշված արտոնության կիրառման արդյունքում շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման համար հաշվարկված տեղական տուրքի գումարի չափը 400.000.000 (չորս հարյուր միլիոն) դրամը գերազանցելու դեպքում շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման համար 2025 թվականի համար սահմանված տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է տեղական տուրքի դրույքաչափի նվազեցման արտոնություն՝ տեղական տուրքի տարեկան առավելագույն դրույքաչափը սահմանելով 400.000.000 (չորս հարյուր միլիոն) դրամ:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**20. Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի հունիսի 17-ի N106-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ – 1.Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի հունիսի 17-ի «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N106-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ –** կողմ՝ 30, դեմ՝ 16, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ այժմ քննարկման է ներկայացվում 2025 թվականի մայիսի 20-ի հերթական նիստի զեկուցվող հարցերը.

**21. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի մարտի 18-ի N313-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:**

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային՝ ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից «Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի մարտի 18-ի N313-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԶԵԿՈՒՅՑԵՑ** – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Դավիթ Հակոբյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ -** Հարցեր ուղղելու համար գրանցվել է ավագանու 5 անդամ.

1. Մեսրոպ Մանուկյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
2. Հայկ Գրիգորյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ
3. Տիգրան Պետրոսյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ
4. Գրիգոր Իսկանդարյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
5. Արման Բաբաջանյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը, Երևանի քաղաքապետի տեղակալ Լևոն Հովհաննիսյանը, քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Դավիթ Հակոբյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ –** Ելույթների համար գրանցվել է ավագանու 13 անդամ.

1. Մեսրոպ Մանուկյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
2. Գրիգոր Իսկանդարյան – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
3. Արմեն Մկրտչյան – Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության անդամ
4. Իոսիֆ Կուբատյան – Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ
5. Պեդրո Զարոկյան – Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ
6. Լուսինե Սարգսյան – Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ
7. Գևորգ Ստեփանյան – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
8. Միեր Բեջանյան – Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության քարտուղար
9. Սամվել Հակոբյան – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
10. Լևոն Լևոնյան – Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ
11. Մանուկ Սուքիասյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար
12. Աննա Ավետիսյան – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
13. Սամվել Հարոյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

Ղեկավարվելով Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետի 13-րդ ենթակետով՝ Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության անունից չհերթագրված, արտահերթ մեկ ելույթով հանդես եկավ խմբակցության ղեկավար Անի Խաչատրյանը, «Ազգային առաջընթաց» խմբակցության անունից չհերթագրված, արտահերթ մեկ ելույթով հանդես եկավ խմբակցության ղեկավար Արամ Թորոսյանը, «Մայր Հայաստան» խմբակցության անունից չհերթագրված, արտահերթ մեկ ելույթով հանդես եկավ խմբակցության անդամ Մեսրոպ Մանուկյանը, «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անունից

չհերթագրված, արտահերթ մեկ ելույթով հանդես եկավ խմբակցության ղեկավար Արմեն Գալջյանը:

Ելույթով հանդես եկավ նաև Երևանի քաղաքապետի տեղակալ Լևոն Հովհաննիսյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** – 1.Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի մարտի 18-ի «Աղբահանության վճարի նկատմամբ հաշվարկված տույժերի վճարման պարտականությունից ազատելու մասին» N 313-Ա որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1. Երևան քաղաքում 2025 թվականի հունվար, փետրվար, մարտ, ապրիլ և մայիս ամիսների համար հաշվարկված աղբահանության վճարը «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված ժամկետներում չվճարած ֆիզիկական (ներառյալ՝ անհատ ձեռնարկատերը և արտոնագրային վճար վճարողը) և իրավաբանական անձանց, հիմնարկներին, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ազատել 2025 թվականի հունվար, փետրվար, մարտ, ապրիլ և մայիս ամիսների համար հաշվարկված աղբահանության վճարը Օրենքով սահմանված ժամկետներում չվճարելու հետևանքով մինչև 2025 թվականի հուլիսի 31-ը ներառյալ հաշվարկված տույժերի վճարման պարտականությունից:»:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ 41, դեմ՝ 2, ձեռնպահ՝ 16

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

**22. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N267-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին:**

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային՝ ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից «Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N267-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» նախագծի վերաբերյալ տրվել է դրական եզրակացություն:

**ԶԵԿՈՒՑԵՑ** – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Դավիթ Հակոբյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** – Ելույթների համար գրանցվել է ավագանու 7 անդամ.

1. Միքայել Խաչատրյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ
2. Գրիգոր Իսկանդարյան – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

3. Մեսրոպ Մանուկյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
4. Արևիկ Բլեջյանց – Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ
5. Լևոն Լևոնյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ
6. Արամ Թորոսյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար
7. Մանուկ Սուքիասյան- Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար

Ղեկավարվելով Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետի 13-րդ ենթակետով՝ Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության անունից չհերթագրված, արտահերթ մեկ ելույթով հանդես եկավ խմբակցության անդամ Հայկ Սահակյանը, Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անունից չհերթագրված, արտահերթ մեկ ելույթով հանդես եկավ խմբակցության ղեկավար Արամ Թորոսյանը, Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անունից չհերթագրված, արտահերթ մեկ ելույթով հանդես եկավ խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանը և «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անունից չհերթագրված, արտահերթ մեկ ելույթով հանդես եկավ խմբակցության ղեկավար Արմեն Գալջյանը:

Ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ –** կողմ՝ 45, դեմ՝ 4, ձեռնպահ՝ 9

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

Կազմեց
Ն. Ղուկասյանը